ՄՐՑՈՒՅԹ RN#21-002

Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ ծրագրի շրջանակներում մեղրի արտադրության հետ կապված սարքավորումների և պարագաների ձեռքբերման, առաքման, տեղադրման և սկզբնական գործարկման

Գնառաջարկի հրավեր

Գնառաջարկների ներկայացման սկզբնաժամկետ՝ **16 հունվարի 2021թ.**

Գնառաջարկների ներկայացման վերջնաժամկետ՝ **01 փետրվարի, 2021թ., ժամը 16:00**

Հարգելի հայտատու,

1. Սույն հրավերով "Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն" հիմնադրամը ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող "Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ" ծրագրի շրջանակներում հրավիրում է Ձեզ ներկայացնելու սույն հրավերին կից **Հավելված 1-ում** ընդգրկված ապրանքների համար Ձեր գնառաջարկը: Հավելված 1-ում տրված է պահանջվող ապրանքների մասնագրերը:

Ապրանքը պետք է լինի նոր չօգտագործված:

"Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ" ծրագրի շրջանակներում կանխավճար չի կատարվում: Ապրանքի համար վճարումը կատարվում է ապրանքի նախնական գործարկումից հետո:

Ապրանքները պետք է առաքվեն Մեծ Սարիար բնակավայր տեղադրվեն և կատարվի փորձարկում:

ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ՎԵՋՆԱԺԱՄԿԵՏԸ

Կից ներկայացված ձևաչափին համապատասխան պատրաստված Ձեր գնառաջարկը ընդունելի է տպագիր՝ կնքված փակ ծրարով:

Հայտը, որն իր մեջ պետք է ներառի գնառաջարկը և համապատասխան տեխնիկական փաստաթղթերը, առկայության դեպքում կատալոգ(ներ) և այլ տպագիր կամ առնչություն ունեցող նյութեր՝ **ներառյալ տեղեկատվություն ապրանքատեսակների արտադրության երկիրը,** պետք է **մինչև 2021 թ. Փետրվարի 1-ի , ժամը 16:00** ներկայացվի "Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն" հիմնադրամի գրասենյակ, որի հասցեն է՝ ՀՀ, Երևան 0037, Ազատության 1\21-40:

Հարցերի դեպքում կարող եք գրել samvel.dallakyan@card.am հասցեին:

Հարցերի պատասխանները կտեղադրվեն կազմակերպության վեբ կայքում՝
http://card.am/hy/tenders
համապատասխան մրցույթի ***«հարց ու պատասխան»*** հղման մեջ:

ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և մեկ պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա գրվում են ԲՆՕՐԻՆԱԿ և ՊԱՏՃԵՆ բառերը:

Ծրարի վրա նշվում են՝

- ✓ Պատվիրատուի անունը և հայտի ներկայցման վայրը /պատվիրատուի հասցեն/
- ✓ Հայտարարության անունը և համարը
- ✓ Չբացել մինչև հայտերի բացման նիստը բառերը
- ✓ Հայտատուի/ընկերության անվանումը, գտնվելու վայրը, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը

Գնառաջարկը պետք է լինի ստորագրված հայտատուի լիազոր ներկայացուցչի կողմից, լինի կնքված հայտատուի պաշտոնական կնիքով և դրված լինի փակ ծրարի մեջ, որի վրա պետք է լինի նշված հայտատու կազմակերպության անվանումը:

ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՕՐԸ և ԺԱՄԸ

1. Հայտերի բացումը տեղի կունենա մրցույթի վերջնաժամկետի օրը՝ ՀՀ, Երևան 0037, Ազատության 1\21-40 հասցեում, ժամը 17:00-ին, հանձնաժողովի անդամների ներկայությամբ: Հայտատուները հրավիրվում են մասնակցելու հայտերի բացմանը:

2. Գնառաջարկները կգնահատվեն հանձնաժողովի կողմից և մասնակիցները կտեղեկացվեն արդյունքների մասին էլեկտրոնային փոստով: Հաջողակ հայտատուն կտեղեկացվի լրացուցիչ:

3. Յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Բոլոր գնառաջարկները, որոնք ներկայացվել են սույն կանոնի խախտմամբ, կմերժվեն:

4. <u>Գները:</u> Գները պետք է առաջարկվեն ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող “Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ” ծրագիրը միջպետական պայմանագրի հիման վրա ազատված է ԱԱՀ-ից և ծրագրի շրջանակներում կտրամադրվի ԱԱՀ-ից ազատելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

5. <u>Գնառաջարկների գնահատում:</u> Առաջարկները, որոնք կհամապատասխանեն տեխնիկական պահանջներին, կգնահատվեն արժեքների և տեխնիկական պահանջների համապատասխանելիության համեմատությամբ: Գնահատելիս Պատվիրատուն առաջնորդվելու է հետևյալ չափորոշիչներով՝

(ա) Առաջարկվող ապրանքների տեխնիկական մասնագրերի համապատասխանությունը սույն հրավերով ներկայացված պահանջներին

(բ) Առաջարկված գինը

Գնառաջարկները գնահատելիս գնառառաջարկում անհամապատասխանություններ լինելու դեպքում Գնորդը յուրաքանչյուր առաջարկի համար կսահմանի գնահատման գինը՝ ուղղումներ կատարելու միջոցով, հետևյալ դեպքերում՝

(ա) որտեղ տարբերություն կա թվերով և տառերով արտահայտված գումարների միջև; տառերով գրված գումարը որոշիչ է,

(բ) որտեղ տարբերություն կա միավոր արժեքի և համապատասխան տողի ընդամենի միջև, որը ձևավորվում է միավոր արժեքի և քանակի բազմապատկման արդյունքում; նշված միավոր արժեքը որոշիչ է,

(գ) եթե մատակարարը հրաժարվում է ընդունել ճշտումները, ապա իր գնառաջարկը մերժվում է:

6. Վավերականություն: Ձեր գնառաջարկը պետք է ուժի մեջ լինի առնվազն քառասունհինգ (45) օր՝ սկսած գնառաջարկի ներկայացման վերջնաժամկետից:

7. **Պատվերի Շնորհում:** Պատվիատուն պայմանագիր կկնքի այն Հայտատուի հետ, ում գնառաջարկը առավելագույնս կհամապատասխանի սույն գնառաջարկի հրավերի պահանջներին և վերոնշյալ չափորոշիչներին:

ԳՆԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

_____(Ամսաթիվ)

Ում: “Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն” հիմնադրամ

ՀՀ, ք.Երևան, Ազատության 1\21-40

Մենք *(Կազմակերպության անունը)* առաջարկում ենք առաքել RN#21-002 մրցույթի Տեխնիկական առաջադրանքում ներկայացված ապրանքները հետևյալ գնով

№	Անվանում	Քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ առանց ԱԱՀ	Ընդամենը ՀՀ դրամ առանց ԱԱՀ
1	Կրեմ-մեղր սարքող սարք 50լ	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
2	Դոզատոր-ավտոմատ պտտվող սեղանով	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
3	Մեղրաքամ	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
4	Ունիվերսալ կոմբինացված հաստոց	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
5	Վակուումային փաթեթավորման սարք	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
6	Ավտոկլավ	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
7	Մեղվաբույծի հագուստ հովացմամբ	2 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*

Պայմանագիրը ստորագրելուց հետո պահանջվող առաքումը ամբողջ ծավալով կատարելու համար մեզ անհրաժեշտ կլինի *(օրերի քանակը)* օր:

Միաժամանակ մենք հասկանում ենք, որ դուք Ձեզ իրավունք եք վերապահում չեղյալ համարել մրցույթը, եթե ներկայացված Գնառաջարկները գերազանցում են տվյալ ծրագրի համար նախատեսված բյուջեն կամ չեն համապատասխանում չափորոշիչներին, կամ ներկայացված են խախտումներով:

Մեր գնառաջարկը ուժի մեջ է *(օրերի քանակը թվերով և բառերով)* օր՝ սկսած սույն մրցույթի համար սահմանված գնառաջարկների ներկայացման վերջնաժամկետից:

Մենք սույնով հաստատում ենք, որ այս Գնառաջարկը համապատասխանում է առաջարկի փաստաթղթերով պահանջվող Գնառաջարկի Վավերականությանը:

Լիազոր անձի ստորագրությունը _____

Ստորագրողի անունն ու պաշտոնը _____

Հասցե _____

Հեռ. _____

Էլ.փոստ _____

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Տեխնիկական առաջադրանք

1.Կրեմ-մեղր սարքող սարք 50 լ.

-Տարողությունը (ծավալը) 50 լիտր է (75 կգ. Մեղր)
- լարումը `220 Վ:
- էլ. Շարժիչի հզորությունը առնվազն - 370 Վտ:
-Տաքացման տարրը գտնվում է իրանի ներքևում պատյանների միջև:
-Ջեռուցող էլէմետի հզորությունը `500 Վտ:
-ջերմաստիճանը կարգավորելի է `0-ից 60 ° C
-Պտուտակը պատրաստված է սննդի չժանգոտվող պողպատից
Պտուտակի պտտման արագությունը կարգավորվում է `8.8-ից 22 պտույտ / րոպե
-Իրանը սննդի չժանգոտվող պողպատից
-Կափարիչը օրգ. Ապակի

2. Դոզատոր-ավտոմատ պտտվող սեղանով

Սարքավորման մետաղական բաղադրիչները պատրաստված են չժանգոտվող պողպատից, որը նախատեսնված է սննդամթերքի օգտագործման համար: Դոզավորիչ պոմպը կարող է օգտագործվել որպես սովորական պոմպ, որը սնուցվում է 230 Վ-լարումով:

Այս սարքավորումը պետք է լուծի մեծ քանակությամբ մեղրի փաթեթավորման խնդիրը: Ավտոմատ պտտվող սեղանը, որը զուգված է մեղրի դոզատորի պոմպի հետ, լցնում է ժամում մինչև 350 տուփ, 500 գրամի չափով: Սեղանը համատեղելի է 4,5-ից 30 սմ բարձրության և 3-ից 15 սմ տրամագծով կլոր ապակե տարաների հետ: Սեղան ունի անիվներով ոտքեր, իսկ սեղանի բարձրությունը և պտտման արագությունը կարգավորվում են մեղվաբույծի կողմից:

Չափիչ պոմպ- դոզատոր:

-ոտքի անջատիչ
-ռետինե խողովակ - 1,5 մ
-արագ հանվող միացուցիչ պոմպին ամրացնելու համար
-խողովակը միացնելու սեղմիչ
Ավտոմատ պտտվող սեղան.

-անիվներով հիմք և սարքի բարձրությունը կարգավորելու հնարավորություն

- հակադարձ պտույթով, չժանգոտվող պողպատից սեղան: Սեղանի մի մասը դատարկ տարաների համար է, մյուսը `լցված սեղանի ռոտացիայի կարգավորելի արագություն

Տեխնիկական պայմաններ.

- ցածր արագության պոմպ ` սիլիկոնային թեվիկով
- թվային հսկողություն
- արտադրողականություն ~ 350 / 500 գ / ժամ (կախված է մեղրի խտությունից)
- լցման ճշգրտություն / - 1-1,5%
- կարող է օգտագործվել որպես պոմպ
- պոմպի բոլոր մասերը, որոնք մեղրի հետ շփման մեջ են, պատրաստված են չժանգոտվող պողպատից կամ պլաստմասից ` հաստատված սննդի հետ օգտագործման համար
- բարձրությունը `82 սմ
- համատեղելի է հետևյալ չափսերի տարաների (բանկաների) հետ. 3-ից 15 սմ տրամագծով, 4,5-ից 30 սմ բարձրության
- էլեկտրալարումը ` 230 Վ / 200 Վտ

3.Մեղրաքամ

Իրանը՝

-Իրանը պատրաստված է սննդի չժանգոտվող պողպատից:
-Ցանցը պատրաստված է չժանգոտվող սննդի պողպատից:
-Մեղրաքամը կոմպլեկտավորվում է մեխանիկական փոխանցումման տուփով և 90 Վտ հզորությամբ շարժիչով, (լարումը 12 վ.) գտնվում է մեղրաքամի ներքևի մասում:
-Մեղրահավաք գրպանը ` 60 կգ:
- 4 մեծ շրջանակի խցիկ՝ չժանգոտվող մետաղից, նախատեսված սննդի համար:

4. Ունիվերսալ կոմբինացված հաստոց

- Մեքենան հագեցած է հզոր ասինխրոն շարժիչով:
- Փոկերով շարժիչը զգալիորեն նվազեցնում է աշխատանքային աղմուկը և պաշտպանում է շարժիչը ծանրաբեռնվածությունից:
- Բոլոր աշխատանքային սեղանները ձուլված և փայլեցված են գորշ չուգունից:
- Երեք դանակ տեղադրված է աշխատանքային լիսեռի վրա:
- Տաշման և սղոցման աշխատանքների համար կա զուգահեռ հենակ:
- Տաշման լիսեռի անվտանգ աշխատանքի համար կա պաշտպանիչ ձող:
- Սղոցի սայրն ունի պաշտպանիչ ծածկ ` անվտանգ շահագործման համար:
- Հնարավոր է կարգավորել սղոցի սայրի բարձրությունը:
- Կա շարժական սեղան պաշտպանիչ հենակով:
- Ակոսային ֆրեզ և 45 աստիճանի ակոս հանելու համար:
- Հաստոցը ունի կտրող գործիքների սրման հնարավորություն, որի համար մեքենան հագեցած է սրիչ անիվով:
- մեքենայի մեծ քաշը այն դարձնում է կայուն և վերացնում է թրթռումը:

Տեխնիկական մասնագրեր

Քաշը- առնվազն 280 կգ

Տաշում (строгание)

-Աշխատանքային լիսեռի տրամագիծը առնվազն մմ 71
-Աշխատանքային լիսեռի ռոտացիայի հաճախականությունը, պտույտ / րոպե 3500
-Մշակման ենթակա կտորի առավելագույն լայնությունը, մմ 300
-Մաքս. տաշման խորությունը մեկ անցումում, մմ 3
- Դանակների քանակը աշխատանքային լիսեռի վրա, հատ 3
- Տաշումը ըստ հաստության (ռեյսմուս)
-Նախապատրաստվածքի մաքս. հաստությունը, մմ 300
-Մշակման մաքս. խորությունը մեկ անցքով , մմ 3
-Նախապատրաստվածքի կտորի մին. երկարությունը, մմ 150
-Նախապատրաստվածքի կտորի մաքս.հաստությունը հաստության մշակման ընթացքում, մմ 120
-Նախապատրաստվածքի Մին. հաստությունը, մմ 6
-Աշխատանքային սեղանի չափը, (рейсмус)մմ 635x308
-Ավտոմատ մատուցման չափը մմ. 6,5
Սղոցում
-Իլի տրամագիծը, մմ 18
-Իլի արագությունը պարապ ընթացքում, պտ/րոպ 3500
-Սկավառակային ֆրեզի արտաքին տրամագիծը, մմ 305 թ
-Նստային (посадочный) տրամագիծը, մմ 25.4
-Մշակման ենթակա կտորի առավելագույն հաստությունը, մմ 85
-Լայնությամբ սղոցելու մաքս. չափը (супорт), մմ 300
Սղոցում թեքանկյան տակ ±45°
Անցքաբացման աշխատանքներ
-Անցքի տրամագիծը, մմ 1.5-13
-Գալիկոնի արտաքին տրամագիծը, մմ 104
-Գալիկոնի կցամասի տրամագիծը, մմ 18
-Սայրի լայնությունը, մմ 6-16
- Աշխատանքային սեղանի այնական ընթացք, մմ 75
-Աշխատանքային սեղանի երկայնական ընթացքը, մմ 90
-Շարժական սեղանի ուղաձիք ընթացք, մմ 65
- Կտրող գործիքի սրում, մմ Այո
-Սրման անիվի չափը, մմ 125x18x9
- Սրվող դանակի մաքս.երկարությունը, մմ 300

5. Վակուումային փաթեթավորման սարք

Հիմնական բնութագրերը

-Տեղադրման տիպը սեղանի
-Տեսախցիկների քանակը `1 տեսախցիկ
-Փաթեթավորման երկարությունը 250 մմ
-Պոմպի արտադրողականությունը 8-ից մինչև 9,6 մ3 / ժ
-Խցիկի չափերը 260x300x120 մմ
-Էլ.լարմում 220 Վ
-Հզորություն 0,5 կՎտ
-Լայնությունը առնվազն 360 մմ

-Խորությունը առնվազն 400 մմ
-Բարձրությունը առնվազն 350 մմ
- փաթեթավորվող ապրանքների (մեղրահաց) հիմնական չափսերը՝ 10սմ*10սմ, 20սմ*10սմ, 15սմ*25սմ,

6. Ավտոկլավ

-Ծավալ 125.0 լ
-Առավելագույն աշխատանքային ջերմաստիճանը 115.0 C
-Հզորություն 7.5 կՎտ
-Առավելագույն ճնշում 0.25 ՄՊա
-Նյութ՝ չժանգոտվող պողպատ -AISI 304
-ՏԷՀ Ջեռուցման տարր
-Էլեկտրոնային կառավարման բլոկ
-Առանց թորման
-Պահանջվող էլեկտրական լարում 380 Վ

7. Մեղվաբույծի հագուստ հովացմամբ 2 հատ

Չափսը՝ 50-52